Ավետիք Իսահակյան

Լեռների լանջում, ծանրը հողի տակ

Լեռների լանջում, ծանրը հողի տակ
Ես թաղված էի՝ մեռա՛ծ, մոռացվա՛ծ.
Ու վաղո՛ւց, վաղո՛ւց անհա՛յտ, լո՛ւռ, մենա՛կ
Ես նընջում էի հոգուս մեջ սուզված:
Եվ հանկարծ մի օր լսեցի հեռվից
Մարտահրավերը վեհ ազատության,
Ընբոստ ամբոխի ձայնը մրրկալից,
Երգե՞ր մարտական, շեփո՛ր ռազմական,
Վառ դրոշակի խրոխտ ծածանում,
Զենքի շառաչյո՛ւն, ձիերի դոփյուն,
Քայլե՛ր առնական
Հողիս մոտեցան,
Եվ դողաց ահա՛,
Եվ թեթևացավ
Հողը իմ վրա.
Եվ սիրտս լըցվեց այրվող արյունով,
Ուզեցի ելնել, նժույգն ամեհի
Խըթանե՛լ, թրոնե՛լ, շառաչե՛լ զենքով,
Կռվե՛լ ու մեռնե՛լ դաշտերում ռազմի …

1906
Կարս